նակալ թագաւոր մի եւ ինքնագլուխ հայրապետ մի նստցի ի Հռոմ, և ի միմեանց վերայ դնիցեն զանձինս իւրեանց ցմահու չափ, և գրով սոսկալեաւ եղեն եղբարք միմեանց թացեալ զգրիչն յահաւոր խորհուրդն։ Եւ բաժանեալ զսուրբ տեղիսն տնաւրինական և ետուն զսուրբ Յակոբն Պատրիարքարան և զԳողգոթան, եւ արկեալ վիճակս ի վերայ Յարութեանն և անկաւ Հայոց, և տրամեցան ոմանք յազգէ։ Ապա հեղն յամենայնի սուրբն Գրիգոր ետ ցնոսա, զի ինքեանք չինեսցին ընդարձակ, զի դեռ չինեալ, և էառ Հայոց ըզԳողգոթայն եւ զսուրբ Կարապետն եւ զՍնարսն, եւ սահմանեալ զտեղին կախեաց կանթեղս յանուն ազգաց, և նա խնդրեաց յԱստուծոյ զիջումն լուսոյն ի նշան յարութեան Քրիստոս, եւ վասն այնորիկ այլ ազգդ չհաւատան, զի յառաջ չկայր մինչ ի նա, եւ առաւել վասն այնորիկ անուանեցաւ Լուսաւորիչ։ Եւ մի ոք անհաւատասցի, զի այնպիսի աշխարհալուր և առաքելական այր, և տիեզերասաստ թագաւոր, յարևելից յարևմուտս գնացեալ, վայրապար գնացին, կամ նոքա փոքր պատիւ համարեցան ինքեանց զգալն նոցա և յամենայն տիեզերս այլ ո՞վ կայր իբրև զնա, կամ յետոյ եղև իբրև զնոսա, և դեռ սկիզբն էր հաւատոյ» (Գ. Թղ. էջ 533–534)։

6. Թադիոսս սարկաւագ Թոխաթեցի
(Տաղասաց, ԺԶ. դար)

«... Եօթանասուն հազար հոգով, աւետիս(*),

(*) «Երուսաղէմ քաղաք մի կայ» սկիզբով տաղին վերջին մասը կը դնենք, վասնզի Ս. Տեղեաց մասին աւանդական տեղեկութիւններ ունի։ Իւրաքանչիւր տաղին վերջը կրկնուած է **աւետիս** բառը։ Աւետիսի յատուկ տաղերը Ս. Ծննդեան գիշերը տղոց կողմէ կ'երգուէին մինչեւ վերջին ժամանակները։